ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2022 թ. կարիքների համար ***համակարգչային տեխնիկայի*** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***արտահերթ*** նիստի

ք. Երևան «27» հոկտեմբերի 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Նվարդ Հովհաննիսյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության պետի պարտականությունները կատարող

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Խաչատրյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող

Տիգրան Հակոբյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության համակարգչային ցանցի ադմինիստրատոր

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

1. «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/12» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ևս ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Հանձնաժողովն արձանագրեց՝

19.10.2022թ. «ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի eauction.armeps.am էլեկտրոնային համակարգով ուղարկվել է հետևյալ ծանուցումը՝

-Կից ուղարկվում է պայմանագրի նախագիծը և առաջարկվում կնքել այն սույն ծանուցումն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում, միաժամանակ տեղեկացվում է, որ 5 աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշ է որակավորման և պայմանագրի ապահովումները գրությամբ ներկայացնել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն: Որակավորման ապահովման չափը կազմում է գնման գնի 15 տոկոսը («900008000664» գանձապետական հաշիվ): Պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը («900008000758» գանձապետական հաշվին): Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Սահմանված ժամկետում՝ ոչ ուշ քան 26.10.2022թ. ներառյալ, «ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի կողմից ուղեկցող գրությամբ պայմանագրի և որակավորման ապահովումները փաստաթղթային

եղանակով չեն ներկայացվել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ինչպես նաև համապատասխան պայմանագիրն էլեկտրոնային թվային ստորագրությամբ չի մուտքագրվել eauction.armeps.am էլեկտրոնային համակարգ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց՝

1. «ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջները:

2. «ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց («ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/12» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում թվով 2):

3. Ընթացակարգն 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված պահանջները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ **Նվարդ Հովհաննիսյան**

Անդամներ՝ _____ **Տիգրան Խաչատրյան**

_____ **Տիգրան Հակոբյան**

Քարտուղար՝ _____ **Օֆելյա Ասատրյան**